ԽՈՍՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԵՐԶԱՐԳԱՑՄԱՆ 4-ՐԴ ՄԱԿԱՐԴԱԿ ՈՒՆԵՑՈՂ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԼՈԳՈՊԵԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԵՐԸ

Հովյան Գ. Ռ.

Խաչատուր Աբովյանի հայկական պետական մանկավարժական համալսարանի լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու

Համբարձումյան Մ.Ս.

Խաչատուր Աբովյանի հայկական պետական մանկավարժական համալսարանի լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի մագիստրոս

Հանգուցային բառեր և արտահայտություններ. բառաքերականական կառույց, նախադասություն, էլիզիաներ, պարաֆազիաներ, վանկերի կրճատումներ:

Առաջին անգամ խոսքի ընդհանուր թերզարգացման վերլուծական հիմնավորումը ձևակերպվել է 20-րդ դարի 50-60-ական թվականներին (Ն. Ա. Նիկաշինա, Գ. Ա. Կաշե, Լ.Ֆ. Սպիրովա, Գ. Ի. Ժարենկովա, Ռ. Ե. Լևինա) [8]:

Խոսքի ընդհանուր թերզարգացման չորրորդ մակարդակն սկսեցին առանձնացնել 20-րդ դարի վերջին տասնամյակներում: Այդ ախտորոշումը տրվում է 5-6 տարեկան երեխաներին: Վերջիններս բացահայտվում են հատուկ ընտրված առաջադրանքների կատարման, երկարատև հետազոտությունների արդյունքում (Տ. Բ. Ֆիլիչևա, 2001):

Խոսքի ընդհանուր թերզարգացման 4-րդ մակարդակ ունեցող երեխաների խոսքի բառաքերականական կառույցի զարգացմանն ուղղված աշխատանքի մեթոդների և հնարների մշակման ուղղությամբ զբաղվել են շատ հեղինակներ (Ռ. Ե. Լևինա 1965, Ն. Ա. Նիկաշինա 2000, Տ. Բ. Ֆիլիչևա 2001, Ժ. Վ. Պուզանովա 2009, Ս.Գ.Կարապետյան, Ա.Ա Կիրակոսյան 2012), սակայն դեռևս մշակված չեն այնպիսի համակարգային և մեթոդական լոգոպեդական առաջադրանքներ և վարժություններ, որոնք կհամապատասխանեն այս երեխաների խոսքի բառաքերականական կառույցի զարգացման գործնական աշխատանքներին [4; 7]:

Խոսքի ընդհանուր թերզարգացման շտկման ուղղությամբ իրականացվող զարգացնող աշխատանքների հիմնական ձևը լոգոպեդական պարապմունքներն են, որոնք կազմակերպվում են անհատական և խմբային ձևերով: Երկու դեպքում էլ, խոսքի զարգացմանն ուղղված աշխատանքներն իրականացվում են չորս փուլով՝ հաշվի առնելով երեխաների անհատական և տարիքային առանձնահատկությունները:

Խոսքի բնականոն զարգացման դեպքում խոսքի բառաքերականական կառույցը յուրացվում է ինքնուրույն՝ մեծահասակին նմանակելու ճանապարհով: Լեզվի յուրաքանչյուր քերականական ձև

արտահայտում է որևէ ընդհանուր, վերացական իմաստ: Լեզվի քերականական օրինաչափությունների տիրապետումը պահանջում է վերլուծության, համադրության ձևավորվածության բավականին բարձր մակարդակ (Ա. Ն. Գվոզդև (1961), Ա. Ն. Լեոնտև (1977), Ե. Ի. Նեգնևիցկայա (1981), Ա. Ն. Շախնորովիչ (1991), Ն. Խ. Շվաչկին (2004) և այլք)):

Խոսքային համակարգի բաղադրիչներից մեկի թերզարգացումն իր հերթին առաջացնում է ամբողջ խոսքային համակարգի փոփոխություններ (Լ. Ս. Վիգոտսկի, Ա. Վ. Զապորոժեց, Վ. Ա. Կովշիկով, Ռ. Ե. Լևինա, Ա. Ռ. Լուրիա և այլք[4]:

Լոգոպեդական գործընթացում առանձնահատուկ դժվարություն է ներկայացնում խոսքային խանգարումներ ունեցող կրտսեր դպրոցականների կողմից նախադասությունների կառույցների հասկացման և գործածման ձևավորումը:

Դպրոցում երեխաների ուսուցման հաջողությունը հիմնականում պայմանավորված է կապակցված խոսքի տիրապետման նրանց մակարդակով: ԽԸԹ ունեցող երեխաների կապակցված խոսքի տիրապետման զգալի դժվարությունները պայմանավորված են նրա հիմնական բաղադրիչների՝ հնչյունային, բառապաշարային և քերականական կողմերի համակարգային թերզարգացմամբ, իսկ հոգեկան գործընթացների զարգացման երկրորդային խնդիրներն ստեղծում են կապակցված մենախոսության տիրապետման լրացուցիչ դժվարություններ:

Տ. Բ. Ֆիլիչևայի կողմից իրականացված հետազոտությունները փաստում են, որ խոսքի ընդհանուր թերզարգացման չորրորդ մակարդակ ունեցող երեխաների խոսքի ինքնատիպությունը հիմնականում դրսևորվում է տրամաբանական հաջորդականության խանգարումներով, էական իրադարձությունների բացթողումներով, առանձին դրվագների կրկնություններով: Բնորոշ են նաև առաջադրված թեմաներով երկխոսության դժվարությունները, թեմատիկ նկարների շարքով պատմություն շարադրելու բարդությունը: Այս երեխաներին բնորոշ են նաև տեսողատարածական խանգարումներ, վերլուծության և համադրության դժվարություններ, սակայն հուզակամային ոլորտում փոփոխություններ չեն դիտվում (Տ. Բ. Ֆիլիչևա, 2001) [7]:

Խոսքի ընդհանուր թերզարգացման չորրորդ մակարդակ ունեցող երեխաների բանավոր խոսքն, ընդհանուր առմամբ, առավելագույնս մոտեցված է նորմային: Լոգոպեդների կողմից կատարված ուսումնասիրությունների ընթացքում բացահայտվել է, որ այս երեխաների գրելու և կարդալու կարողությունների մակարդակը ցածր է: Նրանք դժվարանում են հասկանալ կարդացածի իմաստը, քանի որ ձևավորված չեն նախադասության բառերի շարահյուսական կապերի մասին նրանց ունեցած պատկերացումները. բառն ընկալում են որպես առանձին միավոր, որը կապ չունի նախադասության մյուս անդամների հետ:

Կարդալու կարողության վերլուծական փուլում դրսևորվող խանգարումներն ամենից հաճախ արտահայտվում են հնչյունների փոխարինումներով, հնչյուններով վանկեր կազմելու ունակու-

թյան խանգարումներով, բառի հնչյունավանկային կառուցվածքի աղավաղումներով, ընթերցածը հասկանալու դժվարությամբ: Այս փուլում առավել հաճախ առկա են հնչյունաբանական խնդիրներ, որոնք պայմանավորված են հնչույթային ընկալման գործառույթների թերզարգացմամբ: Կարդալու համադրական հնարներին անցնելու փուլն արտահայտվում է կառուցվածքային աղավաղումներով, բառերի փոխարինումներով, ագրամատիզմներով, կարդացած նախադասությունները և բնագրի բովանդակությունը հասկանալու խանգարումներով:

Կարդալու գործընթացի համադրական դիտվում են նաև բառերի փոխարինումներ, ագրամատիզմներ, կարդացած տեքստը հասկանալու խանգարումներ: Հաճախակի նկատվում է ագրամատիկական դիսլեքսիա, որը պայմանավորված է լեզվի բառաքերականական ընկալման կարողության թերզարգացմամբ:

Գրավոր խոսքում նախադասության մակարդակով ագրամատիզմներն արտահայտվում են բառի ձևաբանական կառուցվածքի աղավաղումներով, հոլովական վերջավորությունների սխալ փոփոխություններով, գոյականի թվի անհամապատասխանությամբ, նկատվում է նաև մտքի շարահյուսական ձևակերպման խանգարում, որն արտահայտվում է բարդ նախադասություններ կառուցելու դժվարություններով, նախադասության անդամների բացթողումներով, նախադասության մեջ բառերի հաջորդականության խախտմամբ: Գրելու և կարդալու կարողությունների խանգարումների պատճառները նույնն են համարվում (Լ.Ս.Վոլկովա, Ռ.Ի.Լալաևա, Ե.Մ.Մաստյուկովա 2009) [3]:

Խոսքի ընդհանուր թերզարգացման չորրորդ մակարդակ ունեցող երեխաների բարձրագույն հոգեկան մի շարք գործառույթներ ձևավորված չեն. տեսողական վերլուծություն և համադրություն, տարածական պատկերացումներ, լեզվի հնչյունների լսողաարտաբերական իմաստով շեշտավորում, հնչութային, վանկային վերլուծության և համադրության անկարողություն, նախադասության բաժանում բառերի, խոսքի բառաքերականական կազմ, դիտվում են հիշողության, ուշադրության, հուզակամային ոլորտի սուկցեսիվ /մասնակի վերլուծություն և համադրություն/, և սիմուլտան/ ամբողջական վերլուծություն և համադրություն/ գործընթացների խանգարումներ: Խոսքի ընդհանուր թերզարգացման այս ձևի ժամանակ նկատվում են նաև գոյականի թվի և հոլովային վերջավորությունների սխալներ, սխալ համապատասխանեցում գոյականի և բայի միջև՝ դեմքի ու թվի առումով / Ես գնում է: Նա վազում են: /, ժամանակային ձևերի սխալ կառուցում / Վաղը ես գնացել եմ դպրոց: / և այլն:

Լոգոպեդական և զարգացնող ուսուցման պայմաններում նշված երևույթներն աստիճանաբար մեղմանում են, բայց միշտ արտահայտվում են, երբ առաջանում է կազմությամբ բարդ, նոր բառերի յուրացման անհրաժեշտություն (Տ. Բ. Ֆիլիչևա, 2001): Խոսքի ընդհանուր թերզարգացման չորրորդ մակարդակին բնորոշ են նաև խոսքի իմաստային կողմի ըմբռնման

խանգարումներ:

Հետազոտության ընթացքում մեր կողմից գործածվածներդրված և օգտագործված խոսքային նյութերը, վարժություններն ու խաղերը պայմանականորեն կիրառվել են ուսուցանող մանկավարժական գիտափորձի ընթացքում: Դրանք տալիս են ԽԸԹ 4-րդ մակարդակ ունեցող երեխաների խոսքի ձևավորմանն ուղղված խաղային առաջադրանքների և խաղային վարժությունների, մանկավարժական մոտեցումների և պայմանների դրական ազդեցությունը և արդյունավետությունը գնահատելու հնարավորություն [9]: Մեր կողմից ընտրված լոգոպեդական աշխատանքի ուղիներն ստեղծեցինը հնարավորություն ստեղծեցին մի շարք հավաստիացնող փորձերով որոշելու ԽԸԹ 4-րդ մակարդակ ունեցող երեխաների խոսքի բառաքերականական կողմի ձևավորման, բանավոր և գրավոր խոսքի զարգացման հնարավորություն, իսկ մանկավարժական գիտափորձում դրանց հիման վրա մշակված ՝ օժանդակող և օգնող խաղային միջոցների կիրառումը, լոգոպեդական գործունեության կազմակերպման գործընթացում նպաստեց ԽԸԹ 4-րդ մակարդակ ունեցող երեխաների հնչարտաբերման միջոցների, խոսքային խնդիրների հաղթահարման միջոցների ցուցանիշների աճին:

Հետազոտության շրջանակներում իրականացված լոգոպեդական աշխատանքների արդյունքում ձևավորեցինք և ամրապնդեցինք երեխաների այնպիսի կարողություններ և հմտություններ, ինչպիսիք են՝ բառաձևերի փոփոխություններն ըստ թվի, հոլովների, դեմքի: Գիտափորձի մասնակիցները սովորեցին ճիշտ գործածել յուրացված նյութը տարբեր խոսքային ենթատեքստերում և իրավիճակներում, կատարված գործողությունների վերաբերյալ խոսել առաջին դեմքով, երրորդ դեմքով, ճիշտ գործածել ուրիշի ուղղակի խոսքը, ձևավորեցինք քերականական կայուն պատկերացումներ, հարստացավ նրանց բառապաշարը, երեխաները սովորեցին կազմել նախադասություններ, ճիշտ գործածել եզակի և հոգնակի թվով դրված գոյականները տարբեր հոլովներում, ծանոթացան կապերին և կապական բառերին:

Մեր կողմից իրականացված հետազոտությունների արդյունքում ստացված տվյալների շնորհիվ կարող ենք փաստել, որ

- խոսքի ընդհանուր թերզարգացման 4-րդ մակարդակ ունեցող սովորողների բառաքերականական խնդիրների հաղթահարման համակարգային մոտեցումը և արդյունավետ լոգոպեդական գործընթացն այս երեխաների կրթական գործընթացին ներգրավելու կարևորագույն նախադրյալներ են
- լոգոպեդները պետք է սերտորեն համագործակցեն և ուսուցիչների համար կազմակերպեն խորհրդատվություն խոսքի ընդհանուր թերզարգացման 4-րդ մակարդակ ունեցող սովորողների հետ աշխատելու առավել նպաստավոր և խոսքի զարգացման արդյունավետ ուղիներ մշակելու համար
- որոշակիորեն ընտրված և մշակված լոգոպեդական մեթոդների և միջոցների կիրառումը նպաստում է խոսքի ընդհանուր

թերզարգացման 4-րդ մակարդակ ունեցող սովորողների հետ իրականացվող լոգոպեդական աշխատանքի արդյունավետությանը

- խոսքի ընդհանուր թերզարգացման 4-րդ մակարդակ ունեցող սովորողների խոսքի բառաքերականական կողմի ձևավորումը նպաստում է սովորողների բանավոր և գրավոր խոսքի զարգացմանը:

Այսպիսով, լոգոպեդական աշխատանքի արդյունավետության համար կարևոր ենք համարում ծնողի, լոգոպեդի և մանկավարժի հետ իրականացվող համագործակցությունը: Կարելի է փաստել, որ խոսքի ընդհանուր թերզարգացման չորրորդ մակարդակ ունեցող սովորողների հետ տարվող իրականացվող լոգոպեդական նպատակասլաց աշխատանքի կազմակերպումը, յուրաքանչյուր երեխայի խոսքի զարգացման անհատական առանձնահատկությունների հաշվառումը և նրանց համար խոսքի զարգացման անհատական ծրագիր ունենալն առավել արդյունավետ միջավայրի ստեղծման և խոսքային խնդրի հաղթահարման պայմաններ է ապահովում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ефименкова Л. Н. Коррекция устной и письменной речи у учащихся младших классов.- М., 1991.
2. Жукова Н.С., Мастюкова Е.М., Филичева Т.Б. Преодоление общего недоразвития речи у дошкольников, второе издание, М., Просвещение, 1990
3. Лалаева Р.И. Формулирование лексического и грамматического строя у дошкольников с ОНР. - СПб., 2001.
4. Левина Р.Е. Общая характеристика недоразвития речи у детей и его влияние на овладение письмом. — Логопедия. Методическое наследие: Пособие для логопедов и студ. дефектол. фак. пед. вузов/Под ред. Л.С. Волковой. — М.: Гуманит. изд. центр ВЛАДОС, 2003. — С. 125-144.
5. Логопедия: учеб. для студентов дефектол. фак. пед. вузов / [Л. С. Волкова, Р. И. Лалаева, Е. М. Мастюкова и др.]; под ред. Л. С. Волковой. - Изд. 5-е, перераб. и доп. - М.: Владос, 2008. - 703 с. - (Коррекционная педагогика).
6. Спирова Л.Ф. Особенности речевого развития учащихся с тяжелыми нарушениями речи (1 -4 классы). - М., 1980.- 163с.
7. Теремкова Н.Э. Логопедические домашние задания для детей 6-8 лет с ОНР. Альбом 1 / Н.Э. Теремкова. - М.: Издательство "ГНОМ и Д", 2007. - 48 с
8. Фешкина Е. К., Проявления дисграфии у детей с ОНР младшего школьного возраста’’
9. Филичева Т.Б. Четвертый уровень недоразвития речи. - Логопедия. Методическое наследие: Пособие для логопедов и студ. дефектол. фак. пед. вузов/Под ред. Л.С. Волковой. — М.: Гуманит. изд. центр ВЛАДОС, 2003. — С. 181-186.

РЕЗЮМЕ

ОСОБЕННОСТИ ЛОГОПЕДИЧЕСКИХ РАБОТ С УЧАЩИМИСЯ ИМЕЮЩИМИ 4-Й УРОВЕНЬ ОБЩЕГО НЕДОРАЗВИТИЯ РЕЧИ

Овян Г.Р.
Доцент кафедры логопедии и восстановительной терапии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, кандидат педагогических наук

Амбарцумян М. С.
Магистр кафедры логопедии и восстановительной терапии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна

В статье представлены особенности, методы, основные принципы логопедической работы с учащимися имеющими 4-й уровень общего недоразвития речи .

SUMMARY

FEATURES OF SPEECH THERAPY WITH THE STUDENTS HAVING 4-TH LEVEL OF GENERAL SPEECH DISORDER

Hovyan G.
Associate Professor Chair of Speech and Rehabilitation therapy Armenian State Pedagagical University after Khachatur Abovyan, Candidate of Pedagogical Sciences

Hambardzumyan M.
Master degree student Chair of Speech and Rehabilitation therapy Armenian State Pedagagical University after Khachatur Abovyan

The article presents the features and the basic principles and methods used in that process of speech therapy with the students having 4th level of general speech disorder .